| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 1412-Ն | *Տեսակը* | Մայր |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2007.12.19/65(589) Հոդ.1311 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 23.11.2007 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 08.12.2007 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 20.12.2007 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |


+ **Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 320 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 նոյեմբերի 2007 թվականի N 1412-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 320 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունիսի 15-ի «Կրթության պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 320 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները`

1) որոշման վերնագիրը և երկրորդ պարբերությունը «ձևերը» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը» բառերով.

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` «ժե» կետով.

«ժե) բարձրագույն մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի) միասնական հավելվածի նմուշը` հայերենով և անգլերենով` համաձայն հավելվածի:».

3) որոշումը լրացնել հետևյալ հավելվածով.

**«Հավելված<br>ՀՀ կառավարության 2000 թվականի<br>հունիսի 15-ի N 320 որոշման**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԴԻՊԼՈՄԻ ՀԱՎԵԼՎԱԾ

**N 000000**

*Սույն դիպլոմի հավելվածը համապատասխանում է Եվրոպական հանձնաժողովի, Եվրախորհրդի և ՅՈՒՆԵՍԿՕ/ՍԵՊԵՍ-ի կողմից մշակված ձևին: Հավելվածը կոչված է տրամադրելու բավարար չափով անկախ տվյալներ, որոնք կբարելավեն որակավորումների (դիպլոմների, ատիճանների, վկայականների և այլնի) միջազգային «թափանցիկությունը» և «արդար» ակադեմիական ու մասնագիտական ճանաչումը: Այն նախատեսված է սույն հավելվածին կցված որակավորման բնօրինակում նշված անձի կողմից ուսումնասիրված և հաջողությամբ ավարտած ուսումնառության բնույթի, մակարդակի, բովանդակության և կարգավիճակի նկարագրությունը ներկայացնելու համար: Այն պետք է զերծ լինի ճանաչման վերաբերյալ ցանկացած սուբյեկտիվ գնահատականից, համարժեքության մասին պնդումներից կամ առաջարկություններից: Անհրաժեշտ է տեղեկություններ զետեղել բոլոր ութ բաժիններում: Այնտեղ, որտեղ դրանք բացակայում են, անհրաժեշտ է ներկայացնել դրանց բացակայության պատճառը:*

**1. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԱՆՁԻ ՄԱՍԻՆ**

1.1. Ազգանունը (ազգանունները).
1.2. Անունը (անունները).
1.3. Ծննդյան ամսաթիվը (օրը, ամիսը, տարեթիվը).
1.4. Ուսանողի անհատական համարը կամ կոդը (առկայության դեպքում).

**2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

2.1. Որակավորման անվանումը և շնորհվող կոչումը (առկայության դեպքում) (բնագրի լեզվով).
2.2. Մասնագիտությունը (մասնագիտությունները).
2.3. Որակավորումը շնորհող հաստատության անվանումը և կարգավիճակը (բնագրի լեզվով).
2.4. Ուսուցումն իրականացնող հաստատության անվանումը և կարգավիճակը (2.3-րդ կետում նշվածից տարբեր լինելու դեպքում) (բնագրի լեզվով).
2.5. Դասավանդման (քննության) լեզուն (լեզուները).

**3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՍԻՆ**

3.1. Որակավորման մակարդակը.
3.2. Ծրագրի պաշտոնական տևողությունը.
3.3. Ընդունելության պահանջը (պահանջները).

**4. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

4.1. Ուսուցման ձևը.
4.2. Ծրագրային պահանջները.
4.3. Ծրագրին առնչվող մանրամասները (օրինակ, ուսումնական մոդուլները կամ մասնաբաժինները) և անհատական գնահատականները (միավորները, կրեդիտները).
(եթե առկա են այս պաշտոնական տվյալները, ապա անհրաժեշտ է դրանք օգտագործել այստեղ)
4.4. Գնահատման գործող համակարգը և գնահատականների բաշխման ուղեցույցը (առկայության դեպքում).
4.5. Որակավորման համընդհանուր դասակարգումը (բնագրի լեզվով).

**5. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

5.1. Հետագա ուսման հնարավորությունը.
5.2. Մասնագիտական կարգավիճակը (առկայության դեպքում).

**6. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

6.1. Լրացուցիչ տեղեկություններ.
6.2. Այլ տեղեկատվական աղբյուրներ.

**7. ՀԱՎԵԼՎԱԾԻ ՎԱՎԵՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ**

7.1. Ամսաթիվը.
7.2. Ստորագրությունը.
7.3. Պաշտոնը.
7.4. Պաշտոնական դրոշմը կամ կնիքը.

**8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

8.1. Կրթական ծրագրերը (տևողությունը).
8.2. Բարձրագույն կրթության որակավորումները.
8.3. Որակի ապահովումը.
8.4. Գնահատման համակարգը.

## DIPLOMA SUPPLEMENT

## REPUBLIC OF ARMENIA

**N 000000**

*This Diploma Supplement follows the model developed by the European Commission, Council of Europe and UNESCO/CEPES. The purpose of the supplement is to provide sufficient independent data to improve the international 'transparency' and fair academic and professional recognition of qualifications (diplomas, degrees, certificates etc.). It is designed to provide a description of the nature, level, context, content and status of the studies that were pursued and successfully completed by the individual named on the original qualification to which this supplement is appended. It should be free from any value judgements, equivalence statements or suggestions about recognition. Information in all eight sections should be provided. Where information is not provided, an explanation should give the reason why.*

**1. INFORMATION IDENTIFYING THE HOLDER OF THE QUALIFICATION**

1.1. Family name(s):
1.2. Given name(s):
1.3. Date of birth (day/month/year):
1.4. Student identification number or code (if available):

**2. INFORMATION IDENTIFYING THE QUALIFICATION**

2.1. Name of qualification and (if applicable) title conferred (in original language):
2.2. Main field(s) of study for the qualification:
2.3. Name and status of awarding institution (in original language):
2.4. Name and status of institution (if different from 2.3) administering studies (in original language):

2.5. Language(s) of instruction/examination:

**3. INFORMATION ON THE LEVEL OF THE QUALIFICATION**

3.1. Level of qualification:
3.2. Official length of programme:
3.3. Access requirements(s)

**4. INFORMATION ON THE CONTENTS AND RESULTS GAINED**

4.1. Mode of study:
4.2. Programme requirements:
4.3. Programme details: (e.g. modules or units studied), and the individual grades/marks/credits obtained: (if this information is available on an official transcript this should be used here)
4.4. Grading scheme and, if available, grade distribution guidance:
4.5. Overall classification of the qualification (in original language):

**5. INFORMATION ON THE FUNCTION OF THE QUALIFICATION**

5.1. Access to further study:
5.2. Professional status (if applicable):

**6. ADDITIONAL INFORMATION**

6.1. Additional information:
6.2. Further information sources:

**7. CERTIFICATION OF THE SUPPLEMENT**

7.1. Date:
7.2. Signature:
7.3. Capacity:
7.4. Official stamp or seal:

**8. INFORMATION ON THE NATIONAL HIGHER EDUCATION SYSTEM**

8.1. Educational programs (length).
8.2. Higher educational qualifications.
8.3. Quality assurance.
8.4. Assessment system.»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ** **Ս. Սարգսյան**

2007 թ. դեկտեմբերի 8
Երևան